նախնական շրջանի բովերից անցել եւ ապա մտել են նախ պղնձի եւ ապա երկաթի դարի շրջանները։ Սակայն շատ ցաւալի է, որ ԺԹ-րդ դարում անգամ գիտական խուզարկութեամբ ուսումնասիրութիւն չի կատարուել, ո՛չ գիտական արտադրութիւնների հետեւանքներից ստացուած հատակոտորներին դժուար է հաւատ ընծայել եւ որոշ եզրակացութիւնների հասնել, անժխտելի փաստեր ներկայացնելով։

Որ Ճորոխի Աւազանում գոյութիւն է ունեցել մայր իշխանութիւն, աւելի երկար դարեր կանանց ձեռքումն է եղել դերիշխանութիւնը, ամազոնները սարսափեցրել են ծովահէններին, դետահէններին. սրանց առասպելների եւ արկածների հետքերը հասել է մինչեւ Հելլէնների դիւցազնց դարը, Արգոնաւորդների շրջանը, այս յայտնի է պատմութեան։ Մեծամօր-Անահիտի պաշտամունքը, նրա քաղաքական եւ զինուորական դերիշխանութիւնը աւելի երկար դարեր պահպանուել է Ճորոխի Աւազանում. այդ մասին ճառում են առանին պատմագրներից աւելի ընդարձակ կերպով երկրի տաճարներն ու բագինները։ Վիշապազանց (ջրապաշտութեան) պաշտամունքը այստեղ եւս այնքան զօրեղ է եղել, ինչպէս Արարատեան աշխարհի, Սիսականի բարձունքներում, ուր դերիշխել է Մայր-Դիցուհին։ Նոյն իսկ միջնադարում եւ Օսման-